Հավելված
ՀՀ փոխվարչապետի 2020 թ.
հուլիսի 15 -ի N 397 - Ա
որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

«ՍԵՎԱՆԻ ՎԱԶԳԵՆՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ԴՊՐԱՆՈՑԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ»

1.	Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է բարելավել դպրանոցի տնտեսական պայմանները՝ առավել բարենպաստ դարձնելով սաների կենցաղային և ուսումնակրթական մակարդակը՝ նպաստելով հոգևոր սպասավորների կրթությանը:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակները	Նախատեսվում է ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը (բարեգործները)	Հայկական բարեգործական ընդհանուր միություն
4.	Ծրագիրը կատարողը	Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցի, ՀՎՀՀ՝ 04703401:
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	ՀՀ Գեղարքունիքի մարզ, Սևանի թերակղզի, Հոգևոր:
6.	Ծրագրի բյուջեն	45.000.000 դրամ:
7.	Բարեգործությունն ստացողը	Սևանի Վազգենյան դպրանոցի սաները:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	01 հունվարի, 2020 թ.- 31 դեկտեմբեր, 2021 թ.:
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է մոտ 90 սաների կրթող Սևանի Վազգենյան դպրանոցն ապահովել բնական գազով և էլեկտրաէներգիայով՝ 60.000.000 դրամ: Գազի մատակարարում՝ 25.000.000 դրամ, որից 2020 թ.-12.500.000 դրամ, 2021 թ.- 12.500.000 դրամ, պայմանագիր՝ N 12108138204, կնքված՝ 01.08.2013 թ., Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու և «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի (ՀՎՀՀ՝ 00046317) միջև: Էլեկտրաէներգիայի մատակարարում՝ 20. 000.000 դրամ, որից 2020 թ.- 10.000.000 դրամ, 2021 թ.- 10.000.000 դրամ, պայմանագիր՝ N ԿՊ0054, կնքված՝ 10.03.2013 թ., Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» (ՀՎՀՀ՝ 01520882) ՓԲԸ-ի միջև:

10.	Ձեռք բերվող ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը	Նախատեսվում է սպառել մոտ 25.000.000 դրամ գազ և 20.000.000 դրամ էլեկտրաէներգիա:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Այլ ծախսեր նախատեսված չեն:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառա-վարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ	Չկա
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Նախատեսվում է տեխնիկական հսկողություն Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու ֆինանսական բաժնի հետ, ինչպես նաև ՀՀ բարեգործական ծրագրերի համակարգման խորհրդակցական հանձնաժողովի կողմից: Ծրագրի ավարտից հետո կտրվի ամփոփ տեղեկություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ